


ՀԱՄԱՏԱԳԵՂ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻՆ

Posted on August 28, 2013 by Keghart



Category: [Opinions](#)



Sentinel of Truth - «Ճշմարտութեան Պահպանը», Հեղինակ՝ **Տիգրան Գալայճեան**

Թորոս Թորանեան, Պէյրուզ, 27 Օգոստոս 2013

Ահա այս անգլերէն գիրքին ամբողջական խորագիրը.- «Ճշմարտութեան Պահպանը՝ Գուրգէն Եանըզեան եւ Հայոց Յեղասպանութեան Ուրացման Դեմ Պայքարը»:



Չարմանալի չգտնեք, որ այս գիրքին հեղինակը Կիպրոս ծնած Պետրոս Գալայճեանի որդին է: Իր մեծ հայրը՝ Ռուբէն, Յեղասպանութեան հրդեհներէն ճողոպրած հայ մը, այդ ոգին փոխանցած է իր որդիներուն՝ Արամին եւ Պետրոսին, Պետրոսը իր հերթին իր որդւոյն՝ Տիգրան Գալայճեանին:

Sentinel of Truth - «Ճշմարտութեան Պահպանը», Հեղինակ՝ **Տիգրան Գալայճեան**

Թորոս Թորանեան, Պէյրուզ, 27 Օգոստոս 2013


Ահա այս անգլերէն գիրքին ամբողջական խորագիրը.- «Ճշմարտութեան Պահպանը՝ Գուրգէն Եանըզեան եւ Հայոց Յեղասպանութեան Ուրացման Դեմ Պայքարը»:



Չարմանալի չգտնեք, որ այս գիրքին հեղինակը Կիպրոս ծնած Պետրոս Գալայճեանի որդին է: Իր մեծ հայրը՝ Ռուբէն, Յեղասպանութեան հրդեհներէն ճողոպրած հայ մը, այդ ոգին փոխանցած է իր որդիներուն՝ Արամին եւ Պետրոսին, Պետրոսը իր հերթին իր որդւոյն՝ Տիգրան Գալայճեանին:

Թուրքը սկիզբը կարծեց, թէ կրնար հայը աշխարհի քարտէսէն ջնջել: Երբ չյաջողեցաւ սկսաւ դիմել ուրացումի քաղաքականութեան: Իրենք եւս ունին հայկական այս առածը.- Սուտին ոտքը կարճ կ'ըլլայ: Միթէ չէի՞ն գիտեր, որ ուրացումի կրկնումը նոյն ուրացումը կը տանի ճշմարտութեան:

Նոր սերունդի գաւակ է Տիգրան Գալայճեան եւ ահա Չարմանալի զուգադիպութեամբ նոյն՝ Կիպրոսի հողին վրայ ծնան մեր երիտասարդներէն Արա Սարաֆեան, գաւակը մելգոնեանցիներ Տէր եւ Տիկին Մարգար Սարաֆեաններու, որ տարներէ ի վեր կը զբաղի Յեղասպանութեան հարցով:

Այլ զուգադիպութիւն՝ Կիպրոս ուսանած Անդրանիկ Պօպելեան մելգոնեանցիին երեք  որդին՝ Մայքըլ Պօպելեանը նոյնպէս անգլերէն լեզուով գիրք հեղինակած է Հայոց Յեղասպանութեան շուրջ, զայն կոչելով «Հայաստանի Երախաները» ուր անդրադորձած է նաեւ Գուրգէն Եանըզեանի գործունեութեան:

Վստահեցեք մեր նոր սերունդին: Նաեւ գալիք սերունդներուն, անոնք մեզ կրնան անակնկալի բերել: Միայն ապառաժի վրայ դրուած ըլլան նոր սերունդներու

ընտանեկան դաստիարակութիւնը, ինչպէս վերոյիշեալ անուններու դաստիարակութիւնը եղած է:

Տիգրան Գալայճեան իր նիւթին տիրապետելու համար ուսումնասիրած է Գուրգէն Եանըզեանի ամբողջ կեանքը՝ անոր ծնունդէն մինչեւ մահը:

Միաժամանակ խոր գիտակ ըլլալու համար Հայոց Տեղասպանութեան հիմնական պատճառներուն եւ գեղեցկային գործադրութեան, դիմած է բազմատասնեակ գիրքերու՝ հայրենական ընտանիքին մէջ իր լսածները ամրագրելով:

Վեպ մը չէ այս գիրքը եւ ոչ ալ հեքիաթ մը, բայց կը կարդացուի վեպի մը կամ հեքիաթի մը պէս:

Դեմքերը կ'անցնին արագ: Կարին ծնած Գուրգէն Եանըզեանը ականատես կ'ըլլայ թուրքերու կողմէ իր ականազ եղբոր՝ Յակոբին գլխատումին, տակաւին ինք մանուկ եւ մօրը լեղապատառ դառնալուն:

Մեր տեսադաշտին առջեւ կ'անցնի Եանըզեանի կեանքը շարժանկարային տեսարաններու պէս, անոր ուսումը, անոր թափառումները- Կովկաս, Մոսկուա, Եւրոպա, Պարսկաստան, Միջին Արեւելք եւ Ամերիկա, անոր վրէժի զգացումին ջրդեղուիլը, Արեւմուտքի եւ Ամերիկայի մեծ լռութիւնը Հայոց Տեղասպանութեան շուրջ, թուրքին ուրացումի քաղաքականութիւնն ու ասոնց բոլորին մէջ իր Յակոբ եղբոր խուժողուժ սպանութիւնը, որ խելագարութեան աստիճանին կը հասցնէ Եանըզեան բազմակողմանի զարգացում ունեցող՝ գեղարուեստական երկերու հեղինակ երիտասարդը, այլ ծերութեան սեմին հասած Եանըզեանը կը մղէ Լոս Անճելըսի մէջ զգեստներու երկու թուրք դիւանագետներ:

Իր նպատակը. Գուրգէն Եանըզեանի գերագոյն նպատակը իր փամբուշտները թուրքին միջոցով մեծ պետութիւններուն ուղղելն էր, որոնք քաղաքական շահերու ետեւէ ըլլալով՝ թուրքին թիկունք կանգնելով անտեսումի քաղաքականութիւնը կը վարէին հայութեան պահանջատիրութեան դէմ:

Եանըզեանը միաժամանակ կ'ափսոսար, որ հայուն Տեղասպանութիւնէն ետք գրեթէ վաթսուն տարիներուն ընթացքին չէր պատահած այն՝ ինչ որ ըրաւ ինք, բացի Մեծ Եղեռնի վաղորդայնին մեծագոյն ոճրագործներուն, Տեղասպանութեան կազմակերպիչներուն դիտապաստ գետին բռուելէն Սողոմոն Թեհլիրեանի եւ իր ընկերներուն կողմէ:

Այնքան ստորին քաղաքականութիւն կը վարէին այսպէս կոչուած մեծ պետութիւնները, որ 1918-ի Հոկտեմբերին վերջնականապէս պարտուած Թուրքիան, յաղթական ազգի մը վերածեցին Սուրբաֆա Քեմալի միջոցաւ:

Անգլիան էր, որ ազատութիւն կը շնորհէր դահճապետներուն՝ Թալէաթին, Էնվերին, Ճեմալին, Ճիվանշիրին եւ միւսներուն, առանց իմանալու, որ հայ վրիժառուներու

անվրեպ գնդակները երրոպական քաղաքներեն մինչեւ Թիֆլիս ու Պոլիսարա, անոնց մարմիններուն արեամբ պիտի ներկէին այդ քաղաքներուն փողոցները:

77 տարեկան Եանըգեան գիտակից մահուան գնաց՝ միջոց մը մտածելով, որ ինք եւս Թեհլիրեանին նման անպարտ կ'արձակուի: Բայց երբ ան յանձնուեցաւ բանտի խուցին, իմացաւ իր գործին շարունակուիլը՝ որուն վստահութիւնը ունէր արդէն:

Մեծ առաջնորդին օրինակով կամ օրինակէն ծնունդ առաւ ԱՍԱԼԱ - Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակ կազմակերպութիւնը, որուն պատմութիւնը եւս ամփոփ կերպով ուսումնասիրած է Տիգրան Գալայճեանը՝ ընելով թուում մասանցը այս կազմակերպութեան քառասունէ աւելի գործողութիւններուն, ոչ միայն Մերձաւոր Արեւելքի եւ Եւրոպայի մայրաքաղաքներու՝ այլ նոյնիսքն Թուրքիոյ մայրաքաղաք Անգարայի մէջ, թուրքին որչին մէջ, Եանըգեանի ծննդավայրին անուան՝ «Կարին» գործողութեամբ, ուր յետոյ բանտին մէջ թուրքերը կախաղան բարձրացնելով այդ գործողութեան մասնակից գերեվարուած հայորդին, հայոց ժամանակակից պատմութեան բեմը բարձրացուցած եղան հերոս Լեւոն Էքմէքճեանը:

Հայ երիտասարդութիւնը զարթնումի շրջան մը բոլորեց: Նոյն ժամանակամիջոցին այլ կազմակերպութիւն մըն ալ մէջտեղ եկաւ՝ Հայոց Յեղասպանութեան Արդարութեան Մարտիկները, որ նոյնպէս թուրք դիւանագետներ սպաննեց:

Այդ բոլորը ցնցեց Թուրքիան, որ դիմեց բազմաթիւ միջոցներու, որպէսզի իր քաղաքական գործիչները ապահով ըլլան:

Իրար անցան նաեւ մեծ պետութիւնները, որովհետեւ ԱՍԱԼԱն ամէն տեղ էր, Ճշմարտութեան Պահակները ամէն տեղ էին՝ Լիբանանէն մինչեւ Պոլսոյ Փակ շուկաները, Իրանէն մինչեւ Յունաստան, Եւրոպա եւ Ամերիկա, Փարիզի թրքական հիւպատոսարանի «Վան» գործողութեամբ գրաւումէն եւ Օրլիի օդանաւակայանէն մինչեւ Պոլսոյ փետուր:

Հեղինակին գրիչին տակէն ԱՍԱԼԱի զինեալ տղաքը իրենց փամբուշտակալներով կը սուրան մայրաքաղաքէ մայրաքաղաք հաստատելով, թէ իրենք տեռօրիստներ՝ ահբեկիչներ չեն, որ իրենք արդար դատի մը համար՝ Հայոց Արդար Դատին համար կը դիմեն զէնքի, քանի այլապէս լուռ է աշխարհ՝ սատկած լէշի լռութեամբ եւ այն պետութիւնը, որ լռութիւն կը պահէ Հայոց Յեղասպանութեան մասին, մահ բերած կ'ըլլայ աշխարհին: Ասոր լաւագոյն ապացոյցը Եանըգեանը դատող դատարանին դատախազին տասնեակ տարիներ ետք կատարած մեղայական խոստովանութիւնն է, թէ ինք սխալ կատարած էր չձգելով, որ Եանըգեան դատարանին մէջ իր արարքը պաշտպանէ՝ Հայոց Յեղասպանութեան իրողութեան վրայ հիմնուելով:

Ընթերցողներ, գտէ՛ք Տիգրան Գալայճեանին այս գիրքը ու անպայման կարդացէք: Գիրքը տպուած է Ամերիկայի մէջ, այս տարի՝ 2013 թուականին:

Այս գիրքը մեզի կ'ըսէ.- Հաւատացէ՛ք Նոր սերունդին:

